

# ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

## ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՏՈՆԻՆ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ՕՐՀՆԵՑ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ

Ապրիլի 13-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հանդիսավորապես նշվեց Ծաղկազարդը՝ հիշատակը Հիսուս Քրիստոսի Երուսաղեմ մուտք գործելու: Այս առթիվ Մայրավանքում Ս. Պատարագ մատուցվեց: Պատարագիչն էր Գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը:

Նախքան սրբազան արարողությունը, հանդիսապետությամբ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, զանգակատան դիմաց կատարվեց Անդաստան, որի ընթացքում օրհնվեցին աշխարհի չորս կողմերն ու արմավենու և ուռենու ճյուղերը:

Հավարտ Ս. Պատարագի Վեհափառ Հայրապետն օրհնեց ներկա բոլոր մանուկներին՝ իր հայրական պատգամը փոխանցելով նրանց. «Այս երեխաները պիտի կրթվեն Աստծո պատգամներով ու պատվիրաններով, որպեսզի ճանաչեն բարին մեր կյանքում և կարողանան իրենց ընթացքը պահել բարու ճանապարհների վրա: Աղոթքով հայցում ենք Երկնավոր մեր Տիրոջից, որ Իր ամենախնամ հայացքի ներքո աճ և հասակ պարգևի սիրասուն մեր զավակներին, որպեսզի նրանք լինեն հավատավոր, նախանձախնդիր անձեր մեր հայրերի սուրբ հավատքի, ինչպես նաև արժանավոր քաղաքացիներ մեր ազատ ու անկախ հայրենի երկրի»,- պատգամեց Նորին Սրբությունը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*